148

1. Հիսուսի սիրուց ես չեմ բաժանվի,
Թեև հալածանք ու սուր սպառնան,
Նեղություն, տառապանք սիրով կկրեմ,
Որ սուրբ հավատքս կենդանի պահեմ:

Հավատքս չեմ մոռանա,
Տիրոջս չեմ ուրանա,
Խաչը ուսիս կգնամ,
Մինչ Հիսուսին միանամ:

2. Բանտերում խավար թեև շղթայեն,
Վերքերով լեցուն մարմինս խոցեն,
Կգրեմ, ո՛վ Տեր, արյունովս թափված,
Քեզ չեմ մոռանա, Տեր իմ Աստված:

3. Ո՛չ կյանք, ո՛չ մահ, ո՛չ զորություններ,
Ո՛չ ներկա բաներ, ո՛չ գալու բաներ,
Եվ ո՛չ բարձրություն, ո՛չ խորություններ
Ինձ չեն բաժանի Քեզանից, ի՛մ Տեր:

4. Մինչև իմ արյան վերջին կաթիլներ
Քեզ հավատարիմ կդավանեմ, Տեր,
Մինչ մարի կյանքս, շունչս վերջանա,
Սիրելի՛ Հիսուս, Քեզ չեմ մոռանա:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025